ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-7

ԵՊՀ ԻՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30. 03. 2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 13-ը:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2018-2019 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն», «Սերվիս» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի ձևավորման մասին: /Զեկ. Գ. Ավետիսայն/
2. 2018-2019 ուս. տարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին: /Զեկ.Գ. Ավետիսայան/
3. Ընթացիկ հարցեր.
   3.1. ԵՊՀ ԻՄ-ի 25 ամյակի միջացառումների (սեպտեմբեր- հոկտեմբեր) ձևաչափի քննարկման մասին: /Զեկ.Գ. Ավետիսայան/

1. ***Լսեցին- 2018-2019 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն», «Սերվիս» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի ձևավորման մասին: /Զեկ. Գ. Ավետիսայն/***

Գ. Ավետիսայնը նշեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարուղարը, որ տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման

հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ: Այս ամենը հաշվի առնելով, Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը.

«Տնտեսագիտության տեսություն»

1.Աղաջանյան Գագիկ Գրիգորի	նախագահ, տ.գ.թ., ՀՀ ԿԲ Վիճակագրության վարչության պետ
2.Ավետիսյան Գայանե Հրաչիկի	տ.գ.թ., դոցենտ, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ
3.Միքայելյան Միքայել Վարազդատի	տ.գ.դ., պրոֆեսոր, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ
4.Զուրաբյան Մարատ Հովիկի	բ.գ.թ., ՀՈՒԲ վարիչ,
5. Ղալթախչյան Արթուր Արծրունի	ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս, ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության բաժնի պետ
6.Մելիքջանյան Լևոն Վալոդի	«Արդշինբանկ ՓԲԸ» Իջևան մասնաճյուղի կառավարիչ
7. Վարդումյան Սոս	«Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագրի» Իջևանի գրասենյակի ղեկավար

«Սերվիս»

1. Մանասյան Գոռ Սուքիասի	նահագահ, աշխ. գ. թ., դոցենտ, Եվրոպական համալսարանի Զբոսաշրջության ֆակուլտետի դեկան
2. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի	աշխ.գ.թ., պրոֆեսոր ԵՊՀ բակալավրիատի բաժնի պետ, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ

3. Ավետիսյան Գայանե Հրաչիկի	տ.գ.թ., դոցենտ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժպ,
4. Սարուխանյան Մուշեղ Լևոնի	բ.գ.թ., ասիստենտ, ՀՈՒԲ վարիչի տեղակալ
5. Ազիզյան Հռիփսիմե Մկրտիչի	մ.գ.թ., տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
6. Չատյան Նարեկ Լևոնի	«Ապագա Ռեզորտ» հանգստյան գոտու մենեջեր,
7. Սարգսյան Վարդան Վոլոդյայի	«Վահան և թոռներ ՍՊԸ» տնօրեն

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեցին, որ ափոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը համապատասխանում է գործող ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի ընդհանուր դրույթներին:

Որոշեցին.- Հաստատել 2018-2019 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն», «Սերվիս» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. ***Լսեցին.- 2018-2019 ուս. տարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության ու պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին: /Զեկ.Գ. Ավետիսյան/***

Գ. Ավետիսյանը նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Հաջողված ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության իրականացման համար կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու առկա բացթողումները և շտկել: Ելնելով վերոնշյալից ներկայացնում եմ 2018-2019 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկները.

Տնտեսագիտության տեսություն՝ 29.04. 2019թ.

Սերվիս՝ 20.04.2019թ.

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների պաշտպանության գրաֆիկները.

Տնտեսագիտության տեսություն՝ 01.06.2019թ.

Սերվիս՝ 25.05.2019թ.

Արտահայտվեցին- Գ. Հովհաննիսյանը

Նա նշեց, որ անհրաժեշտ է ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության գրաֆիկները տրամադրել ավարտական կուրսերի ուսանողներին, ինչպես նաև փակցնել իրենց լսարաններում:

Որոշեցին.- Հաստատել 2018-2019 ուս. տարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության ու պաշտպանության գրաֆիկները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3.Ընթացիկ հարցեր

3.1.Մասնաճյուղի 25- ամյակին նվիրված միջոցառումների (սեպտեմբեր-հոկտեմբեր) ձևաչափի քննարկման մասին: /Զեկ. Գ. Ավետիսյան/

Մասնաճյուղի 25-ամյակը հավուր պատշաճի նշելու համար, Գ. Ավետիսյանը առաջարկեց ամբիոններում կազմակերպել քննարկումներ և ներկայացնել միջոցառումների ծրագիր: Այն կհամապատասխանեցվի մասնաճյուղի միջոցառումների ընդհանուր ծրագրին:

Որոշեցին.- մասնաճյուղի 25-ամյակի կապակցությամբ ըստ ամբիոնների կազմել Տնտեսագիտության ֆակուլտետի միջոցառումների ծրագիր:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*